Հավելված N 1
ՀՀ կառավարության 2023 թվականի
դեկտեմբերի 21-ի N 2294 - Ն որոշման

Կ Ա Ր Գ

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով կարգավորվում են «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ օրենք) 4-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով ամրագրված հիմնադրութային փաստաթղթի ռազմավարական էկոլոգիական գնահատման (այսուհետ՝ ՌԷԳ) իրականացման հետ կապված հարաբերությունները:

2. Օրենքի 21-րդ հոդվածով սահմանված դեպքերում նախաձեռնողն իրականացնում է ՌԷԳ գործընթացը՝ օրենքի 22-րդ հոդվածով սահմանված կարգով:

3. Հիմնադրութային փաստաթղթի նախագիծը և ՌԷԳ հաշվետվությունը ենթակա են շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության՝ նախատեսվող գործունեության Ա կատեգորիայի տեսակների համար օրենքով նախատեսված ժամկետներում և ընթացակարգով:

4. ՌԷԳ-ը իրականացվում է երեք փուլով՝

1) ՌԷԳ շրջանակի որոշում.

2) ՌԷԳ հաշվետվության կազմում.

3) ՌԷԳ արդյունքների հաշվի առնելը հիմնադրութային փաստաթղթում:

2. ՌԷԳ ՇՐՋԱՆԱԿԻ ՈՐՈՇՄԱՆ ՓՈՒԼԸ

5. ՌԷԳ շրջանակի որոշման փուլի ընթացքում իրականացվում են հետևյալ գործողությունները՝

1) որոշվում են ՌԷԳ-ի համար անհրաժեշտ ելակետային տվյալները (հիմնադրութային փաստաթղթով նախատեսվող գործունեությունների կամ նախագծերի

տեսակների, դրանց իրականացման վայրերի, իրականացման նպատակների, տեխնիկատնտեսական ցուցանիշների, չափերի, հզորությունների, բնական ռեսուրսների բաշխման վերաբերյալ), տեղեկությունները, վերլուծությունները, գործընթացի մասնակիցները.

2) իրականացվում է հանրային իրազեկում՝ օրենքի 7-րդ գլխով սահմանված կարգով, իսկ անհրաժեշտության դեպքում օրենքի 6-րդ գլխով սահմանված կարգով իրականացվում են անդրսահմանային ծանուցում և քննարկումներ.

3) որոշվում են հիմնադրութային փաստաթղթի այլընտրանքային տարբերակները, այդ թվում՝ զրոյական՝ հիմնադրութային փաստաթուղթը չիրականացնելու տարբերակը.

4) հստակեցվում են շրջակա միջավայրի և մարդու առողջության վրա հիմնադրութային փաստաթղթի դրույթների հնարավոր ազդեցության մասշտաբները.

5) հավաքագրվում է ՌԷԳ հաշվետվության կազմման համար անհրաժեշտ, այդ թվում՝ շրջակա միջավայրի փաստացի վիճակին վերաբերող տեղեկատվությունը.

6) ուսումնասիրվում է հիմնադրութային փաստաթղթի կապն այլ հիմնադրութային կամ ռազմավարական փաստաթղթերի հետ.

7) բացահայտվում և ուսումնասիրվում են հիմնադրութային փաստաթղթի դրույթների գործողության հետևանքով հնարավոր ազդեցությունների շրջանակները.

8) ուսումնասիրվում են բնակչության սոցիալ-տնտեսական վիճակի վրա հնարավոր ազդեցությունները:

6. Հիմնադրութային փաստաթղթի դրույթների գործողության ազդեցությունները գնահատվում են՝ ելնելով շրջակա միջավայրի՝ ներառյալ մարդու առողջության վրա հնարավոր ազդեցությունների հետևյալ չափանիշներից՝

1) հիմնադրութային փաստաթղթի համապատասխանությունը շրջակա միջավայրի, այդ թվում՝ մարդու առողջության պահպանությանն ուղղված գործընթացներին, մասնավորապես, կայուն զարգացմանը նպաստելու նպատակով.

2) հիմնադրութային փաստաթղթի գործողությունների շրջանակը՝ հաշվի առնելով գտնվելու վայրը, բնույթը, մասշտաբը, շահագործման պայմանները.

3) հիմնադրութային փաստաթղթի կիրառման ազդեցության աստիճանը և այլ հիմնադրութային կամ ռազմավարական փաստաթղթերի հետ.

4) շրջակա միջավայրի՝ ներառյալ բնակչության առողջության վրա հնարավոր ազդեցությունների բնույթը, ռիսկերը, հավանականությունը, տևողությունը, հաճախականությունը, ծավալը, հնարավոր ազդեցության ենթակա տարածքի չափը, ազդեցության ենթակա բնակչության թվաքանակը.

5) հիմնադրութային փաստաթղթի ազդեցության աստիճանը բնության հատուկ պահպանվող տարածքների կամ անտառային հողերի կամ բնակավայրերի կանաչ գոտիների կամ պատմամշակութային հուշարձանների վրա.

6) ազդեցությունների անդրսահմանային բնույթը:

7. ՌԷԳ-ի ենթակա են բոլոր հիմնադրութային փաստաթղթերի նախագծերը և դրանց այն փոփոխությունները, որոնք հնարավոր ազդեցություն կունենան բնության հատուկ պահպանվող և անտառային տարածքների, պատմամշակութային հուշարձանների վրա: ՌԷԳ-ի և փորձաքննության ենթակա լինելը որոշում է լիազոր մարմինը՝ նախաձեռնողի հետ համատեղ խորհրդակցությունների արդյունքով:

3. ՌԷԳ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԿԱԶՄՄԱՆ ՓՈՒԼԸ

8. ՌԷԳ-ի հաշվետվությունը կազմվում է՝ հիմք ընդունելով սույն որոշման N 2 հավելվածի պահանջները:

9. Հաշվետվությունը կազմելիս հաշվի են առնվում գործընթացի մասնակիցների ներկայացրած առաջարկությունները, դիտողությունները և կարծիքները: Դրանք չընդունվելու դեպքում հաշվետվությունում ներառվում են համապատասխան հիմնավորումներ:

10. Համապատասխան լիցենզիա ունեցող անհատ ձեռնարկատիրոջ կամ իրավաբանական անձի մշակած ՌԷԳ հաշվետվությունը՝ համաձայն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի, ներկայացվում է լիազոր մարմին՝ փորձաքննության:

4. ՌԷԳ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՇՎԻ ԱՌՆԵԼԸ ՀԻՄՆԱԴՐՈՒԹԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹՈՒՄ

11. Սույն որոշման NN 1 և 2 հավելվածների պահանջներին համապատասխան՝ ՌԷԳ հաշվետվության դրույթները, ինչպես նաև հանրային մասնակցության և խորհրդակցությունների արդյունքները, հաշվի են առնվում հիմնադրութային փաստաթղթի նախագծում:

12. Նախաձեռնողը պետք է ներկայացնի հիմնավորումներ, թե ինչպես են ՌԷԳ հաշվետվության դրույթները ներառվել հիմնադրութային փաստաթղթում:

5. ՄՈՆԻԹՈՐԻՆԳԸ ԵՎ ՀԵՏՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

13. Նախաձեռնողն իր լիազորությունների շրջանակում հիմնադրութային փաստաթղթի դրույթների գործողության ընթացքում և դրանից հետո իրականացնում է օրենքով նախատեսված շրջակա միջավայրի վրա ազդեցության մշտադիտարկում (մոնիթորինգ) հիմնադրութային փաստաթղթի դրույթների գործողության և դրա հետևանքով շրջակա միջավայրի վրա ազդեցությունների վերաբերյալ:

14. Մշտադիտարկման արդյունքների և հիմնադրութային փաստաթղթի, ՌԷԳ հաշվետվության տվյալների համեմատական վերլուծության արդյունքում նախաձեռնողի կողմից կազմվում է հետնախագծային վերլուծության ծրագիր:

15. Յուրաքանչյուր տարվա մինչև մարտի առաջին տասնօրյակը մշտադիտարկման (մոնիթորինգի) և հետնախագծային վերլուծության արդյունքները հրապարակվում են նախաձեռնողի կայքում (առկայության դեպքում) կամ տրամադրվում են լիազոր մարմնին՝ վերջինիս կայքում տեղադրելու նպատակով:

16. Սույն հավելվածի 13-րդ կետով նախատեսված մոնիթորինգի արդյունքում բացահայտված շրջակա միջավայրի, այդ թվում՝ մարդու առողջության վրա չնախատեսված ազդեցություններ ի հայտ գալու դեպքում նախաձեռնողը նախատեսում և իրականացնում է շրջակա միջավայրի պահպանությանն ուղղված լրացուցիչ միջոցառումներ՝ սահմանելով իրականացման ժամկետներ: Միջոցառումները հրապարակվում են նախաձեռնողի կայքում (առկայության դեպքում) կամ տրամադրվում են լիազոր մարմնին՝ վերջինիս կայքում տեղադրելու նպատակով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

25.12.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ